ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Փետրվարի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ գյուղատնտեսության նորանշանակ նախարար Սերգո Կարապետյանին: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց նախարարին՝ մաղթելով բարի արդյունավորում կարեւոր ծառայության մեջ:

Նորին Սրբությունը, գուղատնտեսությունը նկատելով երկրի տնտեսության առաջնային ոլորտներից մեկը, ընդգծեց գյուղացիների հոգսի թեթեւացման անհրաժեշտությունը, որպեսզի գյուղական վայրերի բնակիչները կապված մնան հայրենի հողին, չլքեն իրենց օջախները՝ արտագնա աշխատանք փնտրելով օտար երկրներում:

Ս. Կարապետյանն իր հերթին ներկայացրեց առաջիկա ծրագրերը եւ ձեռնարկվելիք այն քայլերը, որոնցով հնարավոր կլինի փուլ առ փուլ լուծել ոլորտի խնդիրները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նախարարը քննարկեցին նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նախարարության միջեւ համագործակցության ուղիները: Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի կողմից ներկայացուցիչ նշանակեց՝ համագործակցության առավել արդյունավետ կազմակերպման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԽԱՉ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայ միասնության խաչ» կազմակերպության ներկայացուցիչներին:

«Հայ միասնության խաչ» հասարակական կազմակերպության գործունեությունն ուղղված է քրիստոնեական արժեքների տարածմանը, մանուկների հոգեւոր դաստիարակությանը, նրանց շնորհների զարգացմանը տարբեր ոլորտներում, ինչպես նաեւ հաշմանդամ եւ ծնողազուրկ երեխաների խնամքին եւ հասարակության մեջ ինտեգրմանը: Կազմակերպության առաքելության իրագործմանը աջակցում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ քաջալերելով ազօգուտ աշխատանքը եւ տրամադրելով գործունեության ընդլայնման համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Հանդիպման ընթացքում կազմակերպության տնօրեն Գրիգոր Բաբախանյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը «Հայ միասնության խաչ»-ին ցուցաբերվող ու-

շադրության համար, ապա ներկայացրեց վերջին շրջանի ձեռքբերումները՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Նորին Սրբությանը ողջունեցին նաեւ մանուկները, ներկայացրեցին իրենց խմբակների գործունեությունը, հանդես եկան հոգեւոր երգերի կատարումներով, այնուհետեւ Գարեգին Բ Հայրապետին ընծայեցին իրենց ձեռքերով պատրաստված անվանական մի զորգ:

Վերջում կազմակերպության ղեկավարությանը եւ մանուկներին Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ տարեցտարի ընդլայնվում է կազմակերպության գործունեությունը եւ նորանոր մանուկներ են ընդգրկվում խմբակներում, կոչ արեց ավելի սերտ համագործակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Էջմիածնի հայորդյաց տան հետ: «Շատ կարեւոր է, որ ճիշտ դաստիարակություն եւ արժեքներ ջամբենք մեր մանուկներին, որպեսզի կյանքում կրողը լինեն ճշմարիտ այդ արժեքների եւ լինեն հավատարիմ զավակներ մեր ազգի ու արժանավոր քաղաքացիներ մեր Հայրենիքի», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով աշխատակազմին ամբողջական նվիրումով եւ սիրով շարունակել իրենց առաքելությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՋՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ

Փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ զինված ուժերում ծառայող 46 հոգեւոր սպասավորներին՝ գլխավորությամբ բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Հանդիպման ընթացքում Վրթանես Սրբազանը Հայոց Հայրապետին ներկայացրեց հոգեւոր ծառայության կողմից իրականացվող աշխատանքները եւ առկա մարտահրավերները: Տեղեկացվեց, որ առաջիկա տարի կոնախմբվելու է կառույցի հիմնադրման 15-ամյակը:

Այնուհետեւ ներկաներին իր պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ բանակում հոգեւորականների կարեւոր դերակատարությանը՝ ընդգծելով, որ եկեղեցականը պետք է մշտապես լինի հայ զինվորի կողքին, կերտի նրա հայրենասեր եւ քրիստոնասեր ոգին՝ նրա կյանքը շաղախելով քրիստոնեական մնայուն արժեքներով: «Ձեր ծառայությամբ է նաեւ մեծապես պայմանավորված բացառումը բանակում ցավալի երեւույթների ու միջադեպերի: Հոգեւոր ամրությունն է, որ պայմանավորում է անպարտելիությունը եւ հաղթանակները բանակի», - նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը կոչ արեց եկեղեցականներին պատասխանատվությամբ, նվիրումով, հավատքով եւ անձնական օրինակելի վարքով շարունակել իրենց առաքելությունը՝ ի